ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

# **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**N** 305 **Ա**

**ք.Արտաշատ**

„09„ Հոկտեմբերի **2024թ.**

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՍՅԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Այգեպատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ասյա Հակոբյանի 23.09.2024 թ. ներկայացրած բացատրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> N 79-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում անհրաժեշտ տվյալները Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ չմուտքագրելու համար, <<<ՀՀ Արարատի մարզի Այգեպատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ասյա Հակոբյանի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ